ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/34

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ

Ա.Մաթևոսյանի (լիազորագիր, տրված՝ 02.04.2020թ),

Ն.Խաչատրյանի (լիազորագիր, տրված՝ 16.04.2020թ),

Ռ.Դավթյանի (լիազորագիր, տրված՝ 16.04.2020թ),

«Քլիներս» ՍՊԸ-ի տնօրեն Գ.Պապիկյանի (վկայական թիվ 03Ա947046),

քննելով ««Արմենիա» միջազգային օդանավակայաններ» ՓԲԸ-ի կարիքների համար «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարված «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթի շրջանակներում «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.03.2020թ. ներկայացված (26.03.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/34 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Սկայ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Սկայ գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 26.03.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից ս.թ. փետրվարի 03-ին հայտարարարվել է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման նպատակով թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթ:

Ծանոթանալով մրցույթում ներկայացված պահանջներին՝ Ընկերությունը կայացրել է որոշում՝ մասնակցելու վերոնշյալ մրցույթին, սակայն պահանջների մեջ եղել են մի քանի կետեր, որոնք տպավորություն են ստեղծել, որ մրցույթի պահանջները գրված են հատուկ այն կազմակերպության համար, որի հետ փաստացի երկար տարիներ շարունակ՝ մոտ 12 տարի, առանց փոփոխությունների, առանց Պատվիրատուի կողմից այդ տարիների ընթացքում մաքրման ծառայությունների շուկայի գնային առաջարկների ուսումնասիրության, վերակնքվել է գործող ծառայությունների պայմանագիրը նույն կազմակերպության հետ, այն է՝ «Ֆեկա Լյուքս» ՍՊ ընկերությունը:

Այդ կետերը եղել են՝ օդանավակայանի շենքերի և տարածքների մակերեսներին համարժեք ծավալներում աշխատանքային փորձը պարտադիր է՝ ծածկույթներ, մայթեր՝ նվազագույնը 60.000մ^2 ,Շենքեր, շինություններ՝ նվազագույնը 60000մ^2, ներառյալ՝ մեծ հանրային տարածքներ, ապակեպատ մակերեսներ, նվազագույնը 10000մ^{2,} սանհանգույցներ՝ 1000մ^2, վերելակներ, շարժասանդուղքներ, տանիքներ / ջրհորդանների հատվածների մաքրում աղբից և կուտակումներից/, գրասենյակներ, առնվազն 15000մ$^{2:}$

Ընկերությունը հայտնել է, որ վերը շարադրված պարտադիր աշխատանքային փորձ ունենալը ընդունելի էր, բայց ոչ հստակ նշված քառակուսի մետրերի սահմաններում, քանի որ տվյալ շեշտադրումը թույլ չեր տալիս բազմաթիվ ցանկացող կազմակերպություններին, որոնք ունեն բավականին մեծ աշխատանքային փորձ, բայց որոնց, օրինակ, սպասարկվող տարածքային մակերեսները կազմում են 10000 մ^2 կամ էլ ավելի քիչ, մասնակցել տվյալ մրցույթին և դրանից բխում է, որ Պատվիրատուն չեր կարող ամբողջական պատկերացում ստանալ մաքրման ծառայությունների շուկայում

տիրող մրցակցային գնային առաջարկների վերաբերյալ, որի բացակայությունը կբերեր կոռուպցիոն ռիսկերի և մոնոպոլիայի մթնոլորտի ստեղծման:

Ընկերությունը նշել է, որ Մաքրման աշխատանքները, որոնք կատարվում են տարբեր Պատվիրատուներին պատկանող տարածքներում, չեն տարբերվում, մաքրվում է 10 ,200, 500,1000, թե 60 000 մ^2 տարածքային մակերես, ինչպես շինությունների ներսում, այդպես ել արտաքին տարածքներում: Մաքրությունը տարբեր չափերի մակերեսներում իրականացվում է նույն սանիտարահիգիենիկ նորմերի պահանջներով և տարբերություն չկա թե ինչ մակերեսի զուգարանասենյակներում է տեղադրվում և հսկվում զուգարանի թղթերի, անձեռոցիկների, հեղուկ օճառի, օդի թարմացուցիչի մշտական առկայությունը:

Ինչ վերաբերում է ապակեպատ մակերեսների մաքրման աշխատանքներին՝ նույն սկզբունքն է գործում: Ընդամենը մաքրման տեխնոլոգիայի տարբերություն կա և օգտագործվող մաքրման հեղուկների, միջոցների և սարքավորումների, մաքրվում է ալպինիստների խմբի օգնությամբ, ավտոաշտարակ մեքենայի օգնությամբ, թե հատակին կամ սանդուղքին կանգնած տարբերակով: Մաքրվող տարածքի մ2 ընդհանրապես կազմակերպության որակավորման հետ կապ չունեցող հասկացողություն է: Կարևոր չափանիշ պետք է լինի փորձը:

Շարժասանդուղքների մաքրումը բարդ պրոցես չէ: Մաքրման աշխատանքները իրականացվում են հատուկ սարքավորման միջոցով, որը տեղադրվում է շարժասանդուղքի վրա և ամբողջ մաքրումը կատարում է նա:

Բոլոր տեսակի մաքրման աշխատանքները իրականացվում են նույն նորմերով և ոչ մի տարբերություն չկա՝ ինչ մակերես է մաքրվում, միայն մաքրուհիների քանակի տարբերություն կա և կառուցողական աշխատանքի, հսկող մենեջերների քանակի և պատասխանատու անձանց պրոֆեսիոնալ մոտեցման, մաքրման աշխատանքները իրականացնելու համար առկա տեխնիկական սարքավորումների, մաքրման պարագաների և միջոցների:

Ընկերությունը հայտնել է նաև, որ վատ կամ լավ մաքրման աշխատանքներ կարելի է կատարել ինչպես փոքր, այդպես էլ մեծ տարածքներում, և այն, որ մաքրվող տարածքի մ^2 -ները ոչ մի նշանակություն չունեն աշխատանքները որակով և պատշաճ կատարելու համար:

Այդ կետերը ուսումնասիրելուց հետո, Ընկերությունը զանգահարել է մրցութային փաթեթում նշված Գնահատող հանձնաժողովի քարտուղար Գ.Սարգսյանին՝ իրենց կողմից տրամադրված հեռախոսահամարով՝ +374 98 20 82 79:

Գ.Սարգսյանը, չկարողանալով պատշաճ պատասխան տալ Ընկերության հարցադրումներին, պահանջել է գրավոր ներկայացնել հարցը:

Ընկերությունը գրավոր, կնքված և ստորագրված, սկանավորված տարբերակով նամակը ուղարկել է իրենց կողմից ներկայացված էլեկտրոնային հասցեին՝ gusargsyan@aia-zvartnots.aero՝ 17.03.2020թ.՝ ժամը 13:50-ին և, քանի որ կասկած է ունեցել մրցույթը միտումով անցկացնելու մեջ, Ընկերության կողմից նույն օրը՝ ժամը 15:00-ին, թղթային տարբերակը՝ կնքված և ստորագրված, հանձնվել է ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ -ի ընդունարան՝ տնօրեն Մարսելո Վենդեին հասցեագրված փակ ծրարով:

Այդ քայլին Ընկերությունը գնացել է, որպեսզի ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ -ի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարված մրցույթին մասնակցելու համար սահմանված պահանջների պայմաններում չդիտարկվեր հատուկ միտում ունենալու տարբերակը, որով սահմանափակվում էր մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող կազմակերպությունների քանակը:

Պահանջը եղել է հետևյալը.

Մրցութային հրավերի մեջ կատարել փոփոխություն՝ «ՆՎԱՀԱԳՈՒՅՆ» պահանջվող մ2 պարտադիր ֆիքսված չափերը հանելով:

Ընկերության կողմից նամակում նշվել է, որ 2019 թ. նոյեմբեր ամսին Պետական Գնումների գործընթացներում անգամ, բողոքների և իրականացված ստուգումների արդյունքում, պարտադիր որակավորման չափանիշ «տարիների փորձ» ունենալը հանվել է մրցույթների պահանջներից, քանի որ դա նույնպես թույլ չի տվել մեծ քանակի լուրջ և բարեխիղճ կազմակերպություններին մասնակցնել տարբեր մրցութային գործընթացներին, և այդ փոփոխությունը կատարելով՝ ստեղծվել է արդար մրցակցային մթնոլորտ Գնումների ոլորտում:

Ընկերության կողմից ակնկալվել է, որ առաջարկը կընդունվի, և այդ քայլը կբերի հայտարարված մրցույթի գործընթացում արդար մրցակցության մթնոլորտի, հակառակ

դեպքում դա կդիտարկվեր որպես միտում՝ տվյալ հայտարարված մրցույթին միայն ցանկալի կազմակերպությունների մասնակցություն ունենալու վերաբերյալ:

19.03.2020թ. ժամը 11:09-ին Ընկերությունը ստացել է պատասխան նամակ Գ. Սարգսյանից, համաձայն որի՝ Ընկերության կողմից նշված կետերի հետ Հանձնաժողովը համաձայնվել է և որոշում կայացրել մրցույթի պահանջներում կատարել փոփոխություն:

Փոփոխություններ կատարելու մասին հայտարարությունը հրապարակվել է www.zvartnots.aero և www.gnumner.am կայքերում:

Ընկերությունը ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից 03.02.2020թ. և 19.02.2020թ. փոփոխություններով հայտարարարված «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման թիվ AIA-MCT-09/20 ծածկագրով մրցույթի շրջանակներում մասնակցության հայտ է ներկայացրել փակ մեծ ծրարով, որը բաղկացած է եղել որպես գիրք կազմված 10 հատորից:

Մրցույթի հայտերի բացումը տեղի է ունեցել 10.03.2020թ.՝ ժամը 11:10-ին՝ ՀՀ, ք. Երևան 0042, Զվարթնոց Միջազգային Օդանավակայան, Տերմինալ 4 շենքում գտնվող Ժամանման սրահի նիստերի դահլիճում, որի ընթացքում բացվել է յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված հայտի ծրարը և ստուգվել է պահանջվող փաստաթղթերի առկայությունը յուրաքանչյուր հայտում՝ առանց ուշադրություն դարձնելու մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկին՝ պայմանով, որ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթի գնահատող Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ոչ գնային փաստաթղթերը ստուգելուց և գնահատելուց հետո որակավորված մասնակիցներին պետք է հրավիրի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների՝ 17.03.2020թ.՝ ժամը 11:00-ին :

Ընկերութունը նշել է, որ մասնակիցները չորսն են եղել՝ «Ֆեկա Լյուքս» , «Քլիներս», «Սկայ գրուպ» և «Քլինլայն» ՍՊ ընկերությունները:

Ընկերությունը 16.03.2020թ.՝ ժամը 17:22-ին, էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է նամակ, որն իր մեջ պարունակել է ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման հայտարարված թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթի

Հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքները, յուրաքանչյուր մասնակցի հայտում առկա անհամապատասխանութնունների վերաբերյալ տեղեկատվություն և բոլոր մասնակիցների չորակավորված լինելու որոշում:

Ստացված էլեկտրոնային նամակում թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթի շրջանակներում «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի վերաբերյալ նշված է եղել, որ մասնակցի ներկայացրած մասնագիտական փորձառությունը չի համապատասխանում մրցույթով սահմանված պարտադիր նվազագույն 5 տարի ժամկետին:

Ներկայացված հիմնավորման վերաբերյալ Ընկերության կողմից կրկին ուղարկվել է նամակ էլեկտրոնային փոստի միջոցով 18.03.2020թ. ժամը 12:41-ին Հանձնաժողովի քարտուղար Գ. Սարգսյանին և մյուս անդամներին Maria Grigoryan <mgrigoryan@aia-zvartnots.aero>, Arsen Hambardzumyan <arhambardzumyan@aia-zvartnots.aero>, Karen Torosyan <ktorosyan@aia-zvartnots.aero>, Armen Poghosyan apoghosyan@aia-zvartnots.aero և թղթային տարբերակը կնքված և ստորագրված հանձնվել է ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի ընդունարան տնօրեն Մարսելո Վենդեին:

Ընկերության կողմից նամակում նշվել է, որ էլ ավելի ուշադիր է հարկավոր ուսումնասիրել ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթի շրջանակներում «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերը, քանի որ Ընկերության կողմից ներկայացված են եղել բոլոր պահանջված և անրաժեշտ փաստերը, որոնք վերաբերում են թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթին մասնակցելու Բաժին 2 որակավորման չափանիշներ Մասնագիտական փորձառության մասին յուրաքանչյուր տարվա համար, մեկ անգամ էլ նշելով կազմակերպությունների անվանումները, որտեղ և որ տարիների ընթացքում է իրականացվել մաքրման ծառայություններ սկսված 2015 թ.-ից, և անգամ ամենապարզ մաթեմատիկական հաշվարկով նվազագույն 5 տարվա փորձը տվյալ ոլորտում Ընկերության կողմից ապահովված է եղել:

Ընկերությունը խնդրել է ներկայացնել, թե ինչ փաստերից ելնելով է Հանձնաժողովը չորակավորված հայտարարել «ՍԿԱՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին:

Ընկերությունը հայտնել է, որ գործում է 2015 թ-ից և այդ ժամանակվանից ի վեր՝ 2015 թ-ին՝ «ԻՆՏԵՐ ԼՈՏՈ» ՍՊ, «ՍՊՍ ՍԻԳԱՐՈՆ» ՍՊ, «ՋԵՐՍԱՆ» ՍՊ, « ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲ և այլ, 2016 թ-ին՝ «ԳՈՒԴՎԻՆ-ԲԵՏ» ՍՊ, «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊ, «ԻՆՏԵՐ ԼՈՏՈ» ՍՊ, «ՎԻՎԱՌՈ ԲԵԹԻՆԳ» ՍՊ և «ՄԱՐԳԱՍՈՖՏ ՔՈՐՓ» ընկերության Հայաստանյան մասնաճյուղ, օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ, «ՖԻՆՔԱ» ՈՒՎԿ ՓԲ, «ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱՀԱՄԵՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ, «ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ, «ԱՅԿ-ԴԵՆՏ» ՍՊ, «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲ և այլ, 2017 թ-ին՝ «ՖՈՐԱ» ՍՊ, «ՎԵԿԱՐ ՍՊ» «ՄՈՒՐԱՆ» ՍՊ, «ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ» ՍՊ, «ՄՈԲԱՅԼ ՍԵՆԹՐ ԱՐԹ» ՍՊ, «ԱՄՍ» ՍՊ, «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲ, «ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲ, «ԱՐԱՐԱՏ-ԼԱԴԱ» ՓԲ, «ՍԻ ԷՅՋ ԵՐԿՈՒ ԷՄ ՀԻԼԼ ՔՈՆՍԹՐԱՔՏՐՍ, ԻՆՔ.-Ի ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ» Օտարերկրյա իրավաբանական անձի մասնաճյուղ, «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ և այլ, 2018 թ-ին՝ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ, «ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ» ԴԵՂԱՏՈՒՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍՊԸ, «ԱՌԻԱԼ» ՍՊ, «ԱՎՐՈՐԱ-ՖԱՐՄ» ՍՊ, «ԼԱՌԱՖԱՐՄ» ՍՊ,«ԿԱՌԷ» ՍՊ, 2019 թ-ին՝ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ, «ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ» ԴԵՂԱՏՈՒՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍՊ, «ԱՌԻԱԼ» ՍՊ,«ԱՎՐՈՐԱ-ՖԱՐՄ» ՍՊ,,«ԼԱՌԱՖԱՐՄ» ՍՊ, «ԿԱՌԷ» ՍՊ, «Արմավիրի կաթի գործարան» ԲԲ, 2020թ.-ին՝ «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲ, «ԳԵԴԵՈՆ ՌԻԽՏԵՐ» ԴԵՂԱՏՈՒՆ ՀԱՄԱՏԵՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՍՊ, «ԱՌԻԱԼ» ՍՊ, «ԱՎՐՈՐԱ-ՖԱՐՄ» ՍՊ, «ԼԱՌԱՖԱՐՄ» ՍՊ, «ԿԱՌԷ» ՍՊ, «Արմավիրի կաթի գործարան » ԲԲ, «ՌԻՈ» ՓԲ և այլ ընկերություններում կազմակերպությունը իրականացրել և իրականացնում է շենքերի, շինությունների, ներքին և արտաքին տարբեր նշանակություն ունեցող տարածքների մաքրման, ինչպես նաև սանիտարական մաքրման աշխատանքներ առ այսօր:

Ընկերությունը փորձել է զանգահարել Գ. Սարգսյանի հետ, որպեսզի հասկանա, թե երբ կպատասխանեն նամակին, սակայն նա հայտնել է, որ երբ ժամանակ ունենան, կպատասխանեն:

Ընկերությունը մարտի 23-ին Ժամը 11:41-ին գրավոր՝ իրենց էլեկտրոնային փոստի միջոցով, դիմել է Պատվիրատուին և խնդրել տեղեկացնել քանի աշխատանքային օրվա ընթացքում կպատասխանեն իրենց նամակին:

Նույն օրը ժամը 16:53-ին ստացվել է հեռախոսազանգ 094 52 80 10 հեռախոսահամարից և մի կին, ներկայանալով օդանավակայանի աշխատակից, հայտնել է, որ նամակը այդ պահին էլեկտրոնային տարբերակով ուղարկվում է և խնդրել ստուգել և հաստատել, որ նամակը ստացվել է:

23.03.2020թ. Ժամը 16:55-ին Ընկերությունը ստացել է նամակի պատասխանը՝ ֆաքսիմիլե ստորագրությամբ փոխտնօրենի անունից, որը էլ ավելի անհասկանալի է եղել, քանի որ երկրորդ նամակում Ընկերության հարցադրումն այլ է եղել:

Ընկերության կողմից վկայակոչվել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, համաձայն որի՝ Հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:

Ելնելով վերգրյալից՝ Ընկերությունը գտել է, որ «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է գնահատվեր բավարար և Ընկերությունը նշված մրցույթում ճանաչվեր հաղթող: Սակայն ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲ ընկերությունը չի կատարել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և որոշում է կայացրել ընկերության հայտը մերժել, կամ գնահատել ոչ բավարար:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ին պարտավորեցնել հայտարարված մրցույթի որակավորման չափանիշներ բաժնում նշված 5 տարի նվազագույն ժամկետի հիմքով որակավորման վերաբերյալ «Սկայ գրուպ» ՍՊ ընկերությանը չվորակավորված հայտարարելը համարել ոչ հիմնավոր, «Սկայ գրուպ» ՍՊ ընկերության որակավորումը ընդունել և մրցույթը համարել կայացված՝ շնորհելով պայմանագրի կնքում:

Ընկերության կողմից 03.04.2020թ. ofeli.kirakosyan92@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել են յուրաքանչյուր տարվա մասնագիտական գործունեության վերաբերյալ փաստեր՝ հարկային հաշիվ ապրանքագրեր:

«Սկայ գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.04.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, որն էլ իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲ ընկերությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 31.03.2020թ. և 03.04.2020թ. գրություններով հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթի (հետայսու նաև՝ Մրցույթ) հայտերի բացման նիստը տեղի է ունեցել ՀՀ, ք. Երևան 0042, Զվարթնոց միջազգային օդանավակայան, Տերմինալ 4 շենքում գտնվող Ժամանման սրահի, Նիստերի դահլիճում՝ 2020թ.-ի մարտի 10-ին՝ ժամը 11:00-ին:

Մասնակիցներն են եղել՝ «Ֆեկա Լյուքս», «Քլիներս», «Սկայ գրուպ» և «Քլինլայն» ՍՊ ընկերությունները:

Պատվիրատուն հայտնել է, որ ծրարների բացումից և դրանցում առկա փաստաթղթերի հրապարակումից հետո հանձնաժողովը հայտարարել է 5 աշխատանքային օր ընդմիջում՝ ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրելու նպատակով: Ուստի 2020թ. մարտի 17-ին պետք է հրավիրվեր մրցույթի բանակցությունների նիստ: Սակայն, նոր կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված, հետևելով ՀՀ Առողջապահության նախարարության պաշտոնական հաղորդումներին և կարևորելով հանրային առողջությունը՝ Մրցույթի Հանձնաժողովը հայտերի գնահատման արդյունքները մասնակիցներին հայտնել է գրավոր ընթացակարգով:

Պատվիրատուն մրցույթի հանձնաժողովի 2020թ. մարտի 16-ի էլեկտրոնային հաղորդագրությամբ մասնակիցներին տեղեկացրել է, որ ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի հայտարարված թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթին ներկայացված մասնակիցների ոչ գնային առաջարկների հայտերի ուսումնասիրության արդյունքում մրցույթի հանձնաժողովը բոլոր մասնակիցներին հայտարարել է չորակավորված՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումները:

Պատվիրատուն նշել է, որ մրցույթի Հրավերով /Բաժին 2 Որակավորման չափանիշներ. Մաս 2 Մասնագիտական փորձառություն/ նախատեսվել է, որ **մասնագիտական փորձառությունը համապատասխան ոլորտներում սահմանվում է առնվազն 5 տարի**: Մինչդեռ, «ՍԿԱՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի /որի պետական գրանցումը անգամ 5 տարի չի կազմում/ մասնագիտական փորձառության սկիզբը, ըստ

ներկայացված հաշիվ-ապրանքագրի, հանդիսացել է 2015թ սեպտեմբեր 18-ը, որը հայտը գնահատելու պահին՝ 2020 մարտի 16-ին մասնագիտական փորձառության **առնվազն 5 տարի** չի կազմում:

Պատվիրատուն վկայակոչել է հետևյալ իրավական նորմերը.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերը.

2. Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

3. Տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածը, համաձայն որի՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 328-րդ հոդվածի 1-ին կետը, համաձայն որի՝ տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

Պատվիրատուն հայտնել է, որ ելնելով վերոգրյալից, ինչպես նաև նպատակ ունենալով ապահովել ազատ և բարեխիղճ մրցակցություն և գնման գործընթացը կազմակերպել ոչ խտրական հիմունքներով՝ ստիպված է եղել «Սկայ գրուպ» ՍՊԸ-ին հայտարարել չորակավորված:

Ինչպես նաև պատվիրատուն նշել է, որ ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթին մասնակցելու որակավորման չափանիշները սահմանվել են՝ հաշվի առնելով Օդանավակայանի ծավալները և առանձնահատկությունները: Ուստի նման աշխատանքները կատարելու համար պահանջվում էր ոլորտում մասնագիտացված կազմակերպություն: Սակայն, ոչ գնային

առաջարկների հայտերի ուսումնասիրության արդյունքում, մրցույթին ներկայացված բոլոր մասնակիցները հայտարարվել են չորակավորված:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Պատվիրատուն խնդրել է մերժել «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը:

««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲ ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 02.04.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «Քլիներս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«Քլիներս» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 03.04.2020թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/34 բողոքով իրեն որպես երրորդ կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթ:

2. Մրցույթին մասնակցության հայտ է ներկայացրել «Սկայ գրուպ» ՍՊԸ-ն:

3. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային քաղվածքի համաձայն՝ **«Սկայ գրուպ» ՍՊ ընկերությունը գրանցվել է 19.08.2015թ.:**

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.03.2020թ. ներկայացված բողոքը, ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի 31.03.2020թ, 03.04.2020թ.և 14.04.2020թ. գրությունները, գտնում եմ, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ .

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տարիներով հաշվարկվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **<u>հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ կազմակերպությունների հաստատած գնումների կատարման կարգերով</u>**:

27.06.2020թ. թիվ 07/17-Լ հրամանով հաստատված ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի գնումների գործընթացի կազմակերպման կարգի Հավելված 1-ի 3-րդ գլխի 7-րդ կետը սահմանում է.

Այն դեպքում, եթե տվյալ ապրանքների /ծառայությունների/ աշխատանքների համար առկա չէ Հաստատված մատակարար կամ դրա գնումը միայն մեկ մատակարարից սույն կարգի իմաստով պարտադիր պահանջ չէ, ապա մատակարարի ընտրությունը կատարվում է բանակցությունների միջոցով լավագույն գին որոշելու եղանակով կամ բաց ընթացակարգով մրցույթ անցկացնելու միջոցով: Այս դեպքում Ընկերության կողմից կարող են նախատեսվել որակավորման հետևյալ չափանիշները.

- Մատակարարի մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը,
- **<u>Մատակարարի մասնագիտական փորձառությունը,</u>**
- Մատակարարի տեխնիկական միջոցները,
- Մատակարարի ֆինանսական միջոցները,
- Մատակարարի աշխատանքային ռեսուրսները:

Մրցույթի հրավերի 2-րդ բաժնի 2-րդ կետով մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը սահմանվել է հետևյալ կերպ՝

<u>Մասնագիտական փորձառությունը համապատասխան ոլորտներում սահմանվում է առնվազն 5 տարի:</u>

Պարտադիր նվազագույն տարածքների ծավալներում աշխատանքային փորձ՝

Ծածկույթներ, մայթեր՝ նվազագույնը 10.000մ²

Շենքեր, շինություններ՝ նվազագույնը 10.000մ², ներառյալ՝

- *մեծ հանրային տարածքներ*
- *ասֆալտապատ մակերեսներ, նվազագույնը 6000մ²*
- *սանհանգույցներ՝ 600մ²*
- *վերելակներ*
- *շարժասանդուղքներ*

- *փանիքներ / ջրհորդանների հատվածների մաքրում աղբից և կուտակումներից/*
- *գրասենյակներ, առնվազն 10000մ² :*

Սույն մասով սահմանված որակավորման չափանիշը հավաստելու համար մասնակիցը իր հայտին կից ներկայացնում է՝

Վերջին 5 տարվա պահանջված բնագավառում աշխատանքային փորձը հավաստող պայմանագրերի ցուցակներ:

Վերջին 5 տարվա ընթացքում կատարված աշխատանքներից առնվազն 3 պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստում՝ նշված մակերեսների ընդհանուր ապահովմամբ:

Մրցույթի հրավերի 9-րդ բաժնով, **որպես հայտերը մերժելու հիմքեր,** սահմանվել է, որ **մասնակցի ներկայացրած հայտը մերժվում է, եթե այն օբյեկտիվ որևէ չափանիշով չի համապատասխանում Հրավերի պահանջներին**, մասնակցի կողմից չեն ներկայացվել սույն հրավերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերն ու տեղեկությունները կամ մասնակցի ներկայացրած հայտն այլ կերպով չի համապատասխանում սույն հրավերի պահանջներին:

Այսպիսով՝ ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ի կողմից «Զվարթնոց» միջազգային օդանավակայանի շենքերի և տարածքների մաքրման (այդ թվում՝ սանիտարական) աշխատանքների կազմակերպման և իրականացման ձեռքբերման նպատակով հայտարարվել է թիվ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթ:

Մրցույթին մասնակցության վերաբերյալ հայտ է ներկայացրել «Սկայ գրուպ» ՍՊԸ-ն:

ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային քաղվածքի համաձայն՝ **«Սկայ գրուպ» ՍՊ ընկերությունը գրանցվել է 19.08.2015թ.:**

Մրցույթի հանձնաժողովի 10.03.2020թ. թիվ 3 արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը գնահատել է մրցույթի հայտ պարունակող ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրել է, որ ներկայացված ծրարի կազմման պայմանները համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Հանձնաժողովը հայտարարել է 5 օր ընդմիջում՝ ուսումնասիրելու համար մասնակիցների որակավորման հատկանիշները հավաստող փաստաթղթերի համապատասխանությունը մրցույթի հրավերով սահմանված վավերապայմաններին:

Մրցույթի հանձնաժողովի 16.03.2020թ. թիվ 4 արձանագրության արձանագրվել է, որ

«Սկայ գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած մասնագիտական փորձառությունը չի համապատասխանում մրցույթով նվազագույն 5 տարի ժամկետին:
Նույն արձանագրությամբ, ելնելով արձանագրված անհամապատասխանելիություններից, համաձայն ԱՄՕ Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 5-րդ գլխի, 46-րդ կետի՝ մրցույթի հանձնաժողովի նախագահը բոլոր մասնակից կազմակերպություններին հայտարարել է չորակավորված:

Այսպիսով՝ «AIA-MCT-09/20» ծածկագրով մրցույթի հրավերով **<u>մասնագիտական փորձառությունը համապատասխան ոլորտներում սահմանվել է առնվազն 5 տարի</u>**, «Սկայ գրուպ» ՍՊԸ-ն մրցույթին հայտ է ներկայացրել **<u>09.03.2020թ</u>**., քանի որ «Սկայ գրուպ» ՍՊ ընկերությունը գրանցվել է 19.08.2015թ., հետևաբար արձանագրում եմ, որ արդեն իսկ չի բավարարում մրցույթի՝ հրավերով սահմանված **<u>առնվազն 5 տարվա մասնագիտական փորձառության պահանջին</u>**, ուստի Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նման պայմաններում Ընկերության ներկայացրած պայմանագրերի և հաշիվ-ապրանքագրերի ուսումնասիրության առարկա դարձնելը համարում է առարկայազուրկ:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որով վկայակոչել է ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, և ելնելով վերգրյալից՝ գտել է, որ «Սկայ գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը պետք է գնահատվեր բավարար և Ընկերությունը նշված մրցույթում ճանաչվեր հաղթող, սակայն ««Արմենիա» Միջազգային Օդանավակայաններ» ՓԲԸ-ն չի կատարել ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները և որոշում է կայացրել Ընկերության հայտը մերժել կամ գնահատել ոչ բավարար, ապա սույն մասով հայտնում եմ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գնումների **հետ կապված հարաբերությունները կարգավորվում են վերջիններիս հաստատած գնումների կատարման կարգերով, ուստի սույն պնդումը ևս անհիմն է:**

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Սկայ գրուպ» ՍՊԸ-ի կողմից 26.03.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**